ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Ի.ԱԲԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Աբգարյան,

Ի պատասխան Ձեր 12.12.2018թ. հ.01/27 գրության՝ տեղեկացվում է.

Հարց 1.

-Մեկ երեխայի համար մանկապարտեզը ֆինանսավորվում է 22.500 դրամով, ինչպես նաև հաստատությունները յուրաքանչյուր ամիս ֆինանսավորվում են 650.000 դրամով՝ շենքի պահպանման ծախսերը հոգալու նպատակով: Տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով՝ 2018թ. յուրաքանչյուր խմբին /33-35/ հատկացվել է 147.000 դրամ՝ մեկ տարվա համար: Գրենական պիտույքների, սպասքի, անկողնային սպիտակեղենի ծախսերը նախատեսվում են ըստ հաստատության ֆինանսական միջոցների հնարավորության:

Հարց 2.

-Մանկապարտեզների սննդակարգը կազմվում է ՀՀ առողջապահության նախարարի հ.42-Ն հրամանով սահմանված պահանջներով:

Հարց 3.

-Մանկապարտեզների ֆինանսական հաշվետվությունները տեղադրված են «Yerevan.am» կայքի «ֆինանսական» բաժնում:

Հարց 4.

-Երևանի ենթակայության մանկապարտեզներում աշխատանքային ժամերը սահմանված են Երևանի քաղաքապետի՝ 30.11.2011թ.հ.2833-Ա որոշմամբ՝ ըստ որի՝ մանկապարտեզներում երեխային պահելու տևողությունը ժ.08.30-ից մինչև 17.30-ն է:

Վերոնշյալ որոշմամբ հաստատված է թվով 38 մանկապարտեզների ցանկը, որտեղ երեխային պահելու տևողությունը սահմանված է մինչև ժ.19.00-ն: Կարող եք տեղեկանալ «Yerevan.am» կայքից:

Հարց 5.

-Երևանի քաղաքապետի 2973-Ա որոշումը սահմանել է մանկապարտեզներում երեխաներին հերթագրելու և ընդունելու տարիքը /կրտսեր 1-ին և կրտսեր 2-րդ/, որը չի խոչընդոտում հաստատությունների բոլոր տարիքային խմբերի համալրումը: Վերջին երկու տարիներին առանջնահերթությամբ մանկապարտեզներ են ընդունվում ավագ նախադպրոցական տարիքի հերթագրված երեխաները: Հանրակրթության վարչությունը ներկայացնելու է առաջարկ՝ վերոնշյալ որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ:

Հարց 6.

-Երեխայի հերթագրման տեղափոխության գործընթաց չի իրականացվում, քանի որ դրա իրականացմամբ կխախտվի հերթագրված մյուս երեխաների իրավունքները:

Հարց 7.

-Երեխան իրավունք ունի մանկապարտեզից բացակայել տարբեր պատճառներով, սակայն դա չի նշանակում, որ ծնողը կարող է դրսևորել անբարեխիղճ վերաբերմունք: Մանկապարտեզի տնօրենի և ծնողի միջև կնքված պայմանագրում ամրագրված են ծնողի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև երեխայի բացակայությանն առնչվող դեպքերը:

Հարց 8.

-Մանկապարտեզներում միջոցառումներն իրականացվում են «Կրթական համալիր» ծրագրին համապատասխան, որի կազմակերպման համար դրամահավաքն արգելված է:

Հարց 9.

-2019թ. թվով 13 մանկապարտեզում նախատեսված է ձևավորել 14 խումբ /Արաբկիր, Աջափնյակ, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Շենգավիթ վարչական շրջաններում/ հիմք ընդունելով մանկապարտեզներում հերթագրված երեխաների թիվը և տարածքների առկայությունը: Բացի այդ, տարվա ընթացքում մանկապարտեզներում կբացվեն լրացուցիչ խմբեր: Արդյունքում շուրջ 1000 երեխա կհաճախի մանկապարտեզ:

Հարց 10.

-Մանկապարտեզներում աշխատակիցների՝ այդ թվում դաստիարակների, կենսաթոշակային տարիքն աշխատանքից ազատելու հիմք չի հանդիսանում:

Հարց 11.

-Երևանի ենթակայության ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզների երեխաների կրթադաստիարակչական աշխատանքներին մասնակացում են նաև հոգեբաններ և լոգոպեդներ: Հանրակրթության վարչությունը ներկայացրել է առաջարկություն՝ տրամադրելու լոգոպեդի հաստիք բոլոր մանկապարտեզներին:

Հարց 12.

-Մանկապարտեզները հիմնականում ապահովված են երեխայի զարգացմանն ուղղված խաղային միջոցներով և դիդակտիկ նյութերով: Ինչ վերաբերում է դրանց համալրմանը՝ այն կքննարկվի հաստատությունների նախահաշիվների հաստատման ընթացքում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ